ԵԴ1/0502/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Ա.Հովհաննիսյան

ՀՀ վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Լ.Աբգարյան
դատավորներ՝ Ա.Վարդանյան
Վ.Մարգարյան

20 նոյեմբերի 2026 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Գևորգ Միերի Սիմոնյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2023 թվականի հունիսի 5-ին Գևորգ Մհերի Սիմոնյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 12125623 քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 16-ի դատավճռով Գևորգ Մհերի Սիմոնյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով՝ պատժի կրման սկիզբը հաշվելով 2023 թվականի փետրվարի 21-ից: Գ.Սիմոնյանի նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոց տնային կալանքը երկարաձգվել է երեք ամիս ժամկետով՝ վերացնելով նշանակված սահմանափակումները: Համակցված կիրառվել է նաև բացակայելու արգելքը:

3. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2024 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ մեղադրողի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 16-ի դատավճիռը՝ թողնվել անփոփոխ: Գ.Սիմոնյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված տնային կալանքը թողնվել է անփոփոխ՝ մինչև Վերաքննիչ դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը:

3.1. Վերաքննիչ դատարանի դատավոր, գործով նախագահող Լ.Աբգարյանը, չհամաձայնելով դատական կազմի մյուս դատավորների դիրքորոշման հետ, հայտնել է տարբերվող հատուկ կարծիք:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքաբերը նշել է, որ մեղադրյալ Գ.Սիմոնյանի կատարած արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի, բնույթի և սոցիալական նշանակության սխալ գնահատման արդյունքում Առաջին ատյանի դատարանի դատավճռով մեղադրյալի նկատմամբ, չհիմնավորված կերպով, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ, ոչ արդարացի պատիժ նշանակելու, ապա Վերաքննիչ դատարանի կողմից տվյալ դատավճիռն անփոփոխ թողնելու արդյունքում թույլ են տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ, 55-րդ և 69-րդ հոդվածների խախտումներ, չի ապահովվել կիրառվող օրենսդրության և պետական հակազդեցության համաչափությունը կատարված հանցանքին:

Բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանները ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառման առումով թույլ են տվել դատական սխալ՝ նյութական օրենքի խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա, քանի որ նշված հոդվածով նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում մեղադրյալի նկատմամբ նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ: Այսինքն՝ ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը, այն է՝ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածը, որը ենթակա չէր կիրառման:

6. Բողոքի հեղինակը նշել է, որ մեղադրյալ Գ.Սիմոնյանի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս, ստորադաս դատարանները մի շարք հանգամանքներ ոչ արդարացիորեն են դիտարկել որպես մեղմացնող և գնահատել որպես բացառիկ, ինչի արդյունքում էլ նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

6.1. Բողոքաբերը հիմնազուրկ է համարել Առաջին ատյանի դատարանի այն դատողությունը, որ հանրային վտանգավորության տեսանկյունից չեն կարող հավասարեցվել կամ նույնանալ թմրամիջոցներ տրամադրողի գործողությունները և այն անձի գործողությունները, որն իրեն տրամադրված այդ թմրամիջոցները որոշակի գումարի դիմաց տեղադրում է ինչ-որ վայրում:

6.2. Բողոքաբերն անընդունելի է համարել Առաջին ատյանի դատարանի դիտարկումներն առ այն, որ թմրամիջոցների իրացման փաստի նկատմամբ Գ.Սիմոնյանը դրսևորել է անտարբերություն, քանի որ նրա առաջնային նպատակը գումարի ստացումն է եղել, և վերջինս չի ճանաչել այն անձանց, ովքեր պետք է վերցնեին տեղադրված թմրամիջոցներով փաթեթները:

Վերոգրյալ դատողությունների կապակցությամբ բողոքաբերը նշել է, որ առավել մեծանում է անձի դրսևորած հանդգնության աստիճանը և ոչ թե նվազում՝ բոլոր այն դեպքերում, երբ անձի համար միևնույն է լինում թմրամիջոցը ձեռքբերող անձանց շրջանակը, որպիսի պայմաններում առավել քան մեծանում է ինչպես կատարած արարքի, այնպես էլ դրա արդյունքում առաջացող հնարավոր հետևանքների հանրային վտանգավորությունը:

Բողոքի հեղինակը փաստարկել է, որ նշվածը վերաբերելի է նաև այն հարցին, որ մեղադրյալի համար, ըստ էության, միևնույն է եղել փաթեթների պարունակությունը՝ թմրամիջոցների տեսակի առումով, ուստի անթույլատրելի է դա որպես Գ.Սիմոնյանի արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնող հանգամանք դիտարկելը:

6.3. Անդրադառնալով մեղադրյալի կողմից արարքը հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարված լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների դատողություններին, բողոքի հեղինակը նշել է, որ դրանք որևէ կերպ չեն բխում Առաջին ատյանի դատարանի կողմից մեջբերված՝ Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից:

Բողոքաբերը հիմնազուրկ է համարել նաև ստորադաս դատարանների դիրքորոշումն առ այն, որ թմրամիջոցների իրացման վերաբերյալ առկա հրապարակային հայտարարությունների և գովազդների պատճառով Գ.Սիմոնյանն արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատման կապակցությամբ գտնվել է մոլորության մեջ: Այս առնչությամբ բողոքաբերը նշել է, որ Գ.Սիմոնյանը, գիտակցելով իր արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը՝ փորձել է փախուստի դիմել ոստիկանության աշխատակիցներից, ավտոմեքենայից նետել է թմրամիջոցների պարունակությամբ փաթեթները՝ փորձելով ձերբազատվել հանցագործության հետքերից և առարկաներից, նետել է նաև այն բջջային

հեռախոսը, որով կապի մեջ է գտնվել իրեն թմրամիջոցների փաթեթները տրամադրած, քննությամբ չպարզված տելեգրամյան օգտատիրոջ հետ: Այդկերպ Գ.Սիմոնյանը գիտակցված թաքցրել է մի շարք փաստական հանգամանքներ, որոնք թվային տվյալների տեսքով կարող էին տեղ գտնել բջջային հեռախոսում, որն այդպես էլ չի հայտնաբերվել: Բողոքաբերի համոզմամբ՝ նշված փաստերն ուղղակիորեն վկայում են այն մասին, որ Գ.Սիմոնյանը չի գտնվել որևէ տեսակի մոլորության մեջ իր արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատման կապակցությամբ:

Արդյունքում բողոքաբերը համոզմունք է հայտնել, որ որպես մեղմացնող դիտարկված՝ հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարված լինելու հանգամանքը տվյալ իրավիճակում առկա չէ:

7. Ամփոփելով վերոշարադրյալը՝ բողոքաբերը գտել է, որ ստորադաս դատարանների կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառումը եղել է անհիմն, դրա կիրառման հիմքում դրված պատճառաբանությունները չեն բխում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներից, հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված ներկայացված փաստական հանգամանքները ոչ միայն բացառիկ չեն, այլ անգամ մեղմացնող չեն, հետևապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածը ենթակա չէր կիրառման և Գ.Սիմոնյանի նկատմամբ պետք է նշանակվեր պատիժ՝ հոդվածի սանկցիայի շրջանակներում՝ ազատազրկում՝ 6 տարի ժամկետով:

8. Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 16-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 13-ի որոշումը բեկանել և կայացնել դրան փոխարինող դատական ակտ՝ մեղադրյալ Գևորգ Մհերի Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի սանկցիայի շրջանակներում նշանակելով համաչափ՝ ազատազրկման ձևով ռեալ պատիժ:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

9. Գևորգ Միերի Սիմոնյանին ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(…) [Ն/ա, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն նյութերի շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց ձեռք բերելու, պահելու, փեղափոխելու, փարաճելու, իրացնելու թույլտվություն, շահադիտական դրդումներով իրացնելու նպատակով քննությամբ դեռևս չպարզված ժամանակահատվածում և հանգամանքներում «Տելեգրամ» հեռահաղորդակցման բջջային հավելվածի միջոցով կապ է հաստատել քննությամբ չպարզված անձի հետ, պայմանավորվածություն ձեռք բերել վերջինից ստանալ նախապես փաթեթավորված վիճակում «Կրիստալ» և «Մարիխուանա» տեսակների թմրամիջոցներ պարունակող 39 փաթեթներ՝ յուրաքանչյուր փաթեթը տեղադրելու համար 1000 ՀՀ դրամ շահույթ ստանալու շահադիտական դրդումով։*

*Այնուհետև, 2023 թվականի փետրվարի 21-ին, նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ քննությամբ չպարզված անհայտ անձը Գևորգ Սիմոնյանին ուղարկել է 39 փաթեթների գտնվելու վայրի վերաբերյալ կոորդինատները և լուսանկարները։ Գևորգ Սիմոնյանը նշված կոորդինատներով իր կողմից շահագործվող «Հյունդայ Էլանտրա» մակնիշի՝ ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայով գնացել է Երևան քաղաքի Կենտրոնական գերեզմանատան տարածք, այնտեղից վերցրել հիշյալ 39 փաթեթները՝ անձեռոցիկով փաթաթված ընդհանուր 1 փաթեթում, որոնցից 5-ը մանր չափերի՝ 1.8 գրամ հաստատուն չոր քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ, 15-ը՝ առանձնապես խոշոր չափերի՝ 1.55 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ, 19-ը՝ առանձնապես խոշոր չափերի՝ ՀՀ Կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707–Ն որոշման 1-ին հավելվածի թմրամիջոցների ցանկի 980-րդ կետով սահմանված 7.28 գրամ հաստատուն չոր*

քաշով «MDMB(N)-022» տեսակի թմրամիջոց կրող թութունի բուսական մանրացված զանգվածի պարունակությամբ: Այնուհետև սկսել է դրանք ապօրինի տարածել՝ տեղադրել Կենտրոնական գերեզմանատան պատերի և պարիսպների տակ՝ իրեն անհայտ անձանց իրացնելու նպատակով: Հիշյալ փաթեթներից 7-ը տեղադրելուց հետո իր ավտոմեքենային են մոտեցել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի աշխատակիցները, ինչից հետո Գևորգ Սիմոնյանը դիմել է փախուստի՝ ընթացքում ավտոմեքենայի սրահից գերեզմանատան տարածքի տարբեր հատվածներում դեն նետելով իր մոտ մնացած 32 փաթեթներից՝ 31-ը, ինչից հետո կայանել է ավտոմեքենան:

Դեպքի վայրի զննությամբ Գևորգ Սիմոնյանը գերեզմանատան տարբեր հատվածներում մատնացույց է արել իր կողմից նախապես տեղադրված վերը նշված 7 փաթեթները, ավտոմեքենայից նետված 31 փաթեթները, ինչպես նաև իր կողմից շահագործվող ավտոմեքենայից ներկայացրել է ևս 1 փաթեթ»[1]:

10. Առաջին ատյանի դատարանի դատավճռի համաձայն. *«(…) Դատարանը, ուսումնասիրելով Գևորգ Սիմոնյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման համար նշանակություն ունեցող փոյալները, եկավ հետևյալ եզրահանգման.*

Գևորգ Սիմոնյանի անձը բնութագրող հանգամանք է նախկինում արատավորված՝ դատապարտված չլինելը, ընտանիքի առկայությունը (…) և դրականորեն բնութագրվելը:

(…)

Դատարանը Գևորգ Սիմոնյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է դիտում մեղքն ընդունելը, ինքնախոստովանական ցուցմունքներ տալը, կատարվածի համար անկեղծորեն զղջալը և որոշակի առումով նախաքննությանը աջակցելը:

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 201-203:

Գևորգ Սիմոնյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է նաև հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ առաջին անգամ կատարելը (...):

Միաժամանակ, Դատարանն արձանագրում է, որ Գևորգ Սիմոնյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ առկա չեն:

(...)

Դատարանը, հաշվի առնելով Գևորգ Սիմոնյանի կատարած արարքի բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, մասնավորապես՝ իրացված թմրանյութի տեսակն ու չափը, այդ թվում՝ նրա գործողությունների վտանգավորության աստիճանը, անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները և ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև այն, որ ամբաստանյալի կողմից կատարած հանցագործության համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների սանկցիաներով որպես հիմնական պատիժ՝ նախատեսված է միայն ազատազրկումը, գտնում է պատժի նպատակներին հասնելու համար նրա նկատմամբ պատիժ պետք է նշանակել ազատազրկման ձևով:

Դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք հնարավոր է Գևորգ Սիմոնյանի նկատմամբ կիրառել ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածը, թե ոչ:

(...) Դատարանը նախ հարկ է համարում նկատել, որ առանձնանում են պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ, որոնք կարող են նվազեցնել արարքի և անձի հանրային վտանգավորությունը:

Դատարանը նախ ցանկանում է անդրադարձ կատարել Գևորգ Սիմոնյանի կողմից կատարված արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնող հանգամանքներին, մասնավորապես՝ հանցագործության կատարման շարժառիթին ու նպատակին:

Դատարանի գնահատմամբ հանրային վտանգավորության տեսանկյունից չեն կարող հավասարեցվել կամ նույնանալ իրացնողի գործողությունների վտանգավորության աստիճանը, այն անձի գործողություններից, որ զբաղվում է

բացառապես այդ թմրանյութերի փեղադրմամբ (թմրանյութը որոշակի գումարի դիմաց ինչ-որ վայրում փեղադրելու), մի քանի պայմաններով:

Նախ՝ թեև հանցավորը համաձայնություն հանցանքների կատարման պարագայում այս կամ այլ ձևով իրացման նպատակ է հետապնդում, սակայն թմրանյութերի իրացումը վերջինի առաջնային կամ այլ կերպ ասած՝ ոչ հիմնական նպատակն է: Խոսքն այն մասին է, որ թմրանյութ փեղադրող անձը ոչ ճանաչում է ենթադրյալ իրացնողին, ոչ այն անձին, ով պատրաստվում է վերցնել թմրանյութերը, այդ հանգամանքների նկատմամբ առհասարակ նման բնույթի գործողություններ կատարողն անտարբերություն է դրսևորում, ընդ որում, հենց այդ մասին է իր ցուցմունքում նշել Գևորգ Սիմոնյանը, մասնավորապես՝ վերջինը հայտնել է, որ ինքը տեղյակ չի եղել, թե հետագայում ով պետք է վերցներ այդ փաթեթները:

Մինչդեռ գլխավոր իրացնողն ունի շահագրգռվածություն վերոգրյալի կապակցությամբ, քանի որ հենց իրացման արդյունքում է նա եկամուտ ստանում:

(...) [Ի] վերջո թմրանյութի փոխադրման արդյունքում հասցեատերն այն կստանա, թե ոչ, ուղղակիորեն կապված է ոչ թե տեղադրողի, այլ հենց գլխավոր իրացնողի գործողություններից: Հետևաբար, վրա հասնող հետևանքների տեսանկյունից արարքի վտանգավորությունն առանցքային կերպով տարբերվում է:

Երկրորդ՝ տեղադրողը որևէ եկամուտ չի ստանում բուն իրացման փաստից: Կարելի է ասել, որ նա գործում է հանձնարարության հիման վրա, որպիսի պայմաններում իրացման նպատակ հետապնդում է անուղղակիորեն, քանի որ, ըստ էության, իր առաջնային նպատակը (շարժառիթը, շահագրգռվածությունը) կայանում է թմրանյութի տեղադրումից ստացվելիք գումարը (որը հիմնականում ֆիքսված է լինում):

Վերոգրյալը շեշտվում է, որպեսզի ընդգծվի այն, որ հնարավոր չէ հանրային վտանգավորության միևնույն շեմին դասել իրացման առաջնային և միակ նպատակ հետապնդող անձի գործողությունները (թմրամիջոցների ենթադրյալ իրացնողին, որին չի ճանաչում թմրանյութ տեղադրողը) և այն անձի գործողությունները, ով թմրանյութեր տեղադրելով, գումար է վաստակում և իր տեղադրած թմրանյութերի իրացման փաստի կապակցությամբ անտարբերություն է դրսևորում:

(...)

Կարևոր նշանակություն ունի նաև անձի վերաբերմունքը փաթեթների պարունակության և դրա քանակի նկատմամբ: Մասնավորապես՝ թեև Գևորգ Սիմոնյանը նշել է, որ իր տեղեկություններով ինքը պետք է իրացներ «Կրիստալ» և «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցներ, սակայն այդ փաթեթները ստանալուց վերջինը հնարավորություն չի ունեցել հասկանալ որն ինչ թմրամիջոց է պարունակում: Ավելին՝ ինքն այդ փաստի նկատմամբ անտարբերություն է դրսևորել, քանի որ միևնույն գումարն է ստանում տեղադրման համար անկախ փաթեթի պարունակությունից: Մեղադրյալին միևնույն է նաև այդ փաթեթները քանի գրամ են կշռում, համապատասխանում են իրենց որակին, պարունակությանը և այլն: (...) [Մ]եղադրյալի պարտականություններն ավարտվում են (գումարն էլ փոխանցվում է) թմրանյութը համապատասխան վայրերում տեղադրելով:

Վերոգրյալ հանգամանքներն արարքի իրավական գնահատականի տեսանկյունից նշանակություն չունեն, սակայն հնարավոր չէ անտեսել այն փաստը, որ այդ գործողությունները, դրա արդյունքում հնարավոր վրա հասնող հետևանքները և հատկապես անձի վերաբերմունքն այդ ամենի նկատմամբ միևնույն վտանգավորության շեմը չունեն, որպիսի պայմաններում Դատարանը գտնում է, որ արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնող այս բնույթի հանցանքները քննարկվող հանցակազմի շրջանակում կարող են ինչ-որ տեղ բացառիկ դիտարկվել:

Անդրադառնալով անձի հանրային վտանգավորության աստիճանին՝ Դատարանը որպես Գևորգ Սիմոնյանի քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է դիտարկել մեղքն ընդունելը և կատարվածի համար անկեղծորեն զղջալը, նախաքննությանն աջակցելն ու ինքնահոսպրովանական ցուցմունքներ տալը:

Դրան զուգահեռ, որպես անձի վտանգավորությունն էականորեն նվազեցնող է համարում հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ առաջին անգամ կատարելը:

(...)

Վճռաբեկ Դատարանի (...) դիրքորոշման համատեքստում պետք է արձանագրել, որ հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարելու ներքո կարող են հասկացվել մի շարք իրավիճակներ կամ այդպիսի

իրավիճակների համակցություն: Այդ իրավիճակներն ուղղված են հատկապես անձի սուբյեկտիվ ընկալմանը՝ արարքի հանրային վտանգավորության նկատմամբ: Մասնավորապես՝ հանգամանքների պատահական զուգորդման ներքո ընկալվում են այն դեպքերը, երբ անձն իր կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատման կապակցությամբ մոլորության մեջ է գտնվում: Ընդ որում, սույն դեպքում խոսք չի գնում այն մասին, որ անձն առհասարակ չի գիտակցում իր կողմից կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, այլ վերջինը կարծում է, թե այդ արարքն առավել նվազ վտանգավոր է հանրության համար (իր սուբյեկտիվ ընկալմամբ): Դատարանի գնահատմամբ այդ կապակցությամբ հնարավոր է հանցավորին մոլորության մեջ գցեն մի շարք հանգամանքներ, օրինակ՝ այն, որ տվյալ «աշխատանքի» վերաբերյալ առկա են հրապարակային հայտարարություններ, մարդաշատ վայրերում փակցված գովազդներ և ի վերջո տվյալ հանցագործության հենց սույն դրսևորումը խիստ տարածված է որոշակի տարիքային խմբում (թիրախային խումբ են հանդիսանում երբևէ հանցանք չկատարած երիտասարդները): Այլ խոսքով՝ կարելի է արձանագրել, որ հանցանքի հանրային վտանգավորության կապակցությամբ մոլորության մասին կարող են վկայել օբյեկտիվ իրականության մեջ առկա մի շարք հանգամանքներ, օրինակ՝ անձի շրջապատի վերաբերմունքն այդ հանցանքի կապակցությամբ, պետության արձագանքը հրապարակային հայտարարությունների և գովազդի մասով և մի շարք համանման տվյալներ, որոնց ազդեցության ներքո անձը կարող է կարծել, թե իրականում այդ հանցանքն այդքան էլ վտանգավոր չէ և հատկապես այս աստիճան պատժելի չէ:

Սույն դեպքում Դատարանը հարկ է համարում վկայակոչել մի շարք փաստական տվյալներ, որոնք կարող են վկայել այն մասին, որ Գևորգ Սիմոնյանը կոնկրետ իրավիճակում եղել է իր հանցավոր արարքի վտանգավորության աստիճանի կապակցությամբ որոշակի մոլորության մեջ:

*Մասնավորապես՝ Գևորգ Սիմոնյանն իր ցուցմունքում նշել է, որ «տեղադրողի աշխատանքի» մասին իմացել է գովազդի միջոցով, որը եղել է տելեգրամյան «**********» էջում: Դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ հանցավոր գործունեություն իրականացնելու վերաբերյալ առկա են հայտարարություններ,*

որոնք հրապարակային և հասանելի են ցանկացած անձի, ապա նշվածն առնվազն կարող է որոշակի մոլորության մեջ գցել անձին: Օրինակ՝ նշված հայտարարության առկայության դեպքում անձը կարող է կարծել, որ եթե պետությունն այդ արարքը պատժելի է համարում կամ այդ ապրիճան վտանգավոր ու պարսավելի (խոսքը արարքի հակահրավականության չգիտակցելու մասին չէ, այլ դրա վտանգավորության բարձր աստիճանի), ապա այդ հայտարարությունները պետք է հեռացվեն կամ այդ էջերն արգելափակվեն:

Այսինքն՝ վերը նշվածը ողջամտորեն կարող է փաստել այն հանգամանքը, որ շատ հաճախ նմանատիպ սխեմաների մեջ ներքաշված անձինք խորությամբ չեն կարող պատկերացնել իրենց իսկ քայլերի վտանգավորությունը, դրանց բարձր հակահրավականությունը, հանրության համար ապասվող հետևանքների ծանրությունը և այլն: Այլ կերպ ասած՝ եթե մի գործընթաց հրապարակային գովազդվում է և այդ պրոցեսում ներգրավվելն ու դրա իրականացումն առանձնահատուկ ջանքեր չի պահանջում, ապա դա ինքնին կարող է վկայել հանցավորի ընկալմամբ ոչ այդքան վտանգավոր գործողությունների իրականացման մասին: Վերջիններին առաջին հայացքից թվում է, որ հրապարակային գովազդի արդյունքում կարող են հեշտությամբ գումար աշխատել՝ ընդամենը որոշակի փաթեթներ, օրինակ՝ մայրաքաղաքի տարբեր վայրերում դնելով՝ առանց որևէ մեկին տեսնելու և շփվելու: Ավելին՝ քննարկվող խմբի անդամներն ի սկզբանե ներառված չեն և դա իրենց չի էլ հուզում թմրանյութի հայթայթման, դրա իրացման համար համացանցային եղանակով կազմակերպման, անձանց ներգրավման կամ ինչպես արդեն նշեցինք՝ թմրանյութի տեսակի, չափի և իրացման քանակով պայմանավորված եկամուտներ ստանալու գործընթացների մեջ:

Սույն մեղմացնող հանգամանքի շրջանակներում հաշվի է առնվում նաև մեղադրյալի անձը և վերջինիս այդ արարքը, ըստ էության, բնորոշ չլինելը: Մասնավորապես՝ ներկայացված փվյալների համաձայն՝ վերջինը նախկինում արատավորված՝ դատապարտված չի եղել, առաջին անգամ է հանցանքը կատարում և դրան զուգահեռ թե զինվորական ծառայության և թե առօրյա կյանքում դրականորեն է բնութագրվում, որպիսի պայմաններում ողջամիտ է այն

պրամաբանությունը, որ վկայակոչված հանցանքի կատարումը մեղադրյալին առերևույթ բնորոշ չէ:

Ուսպի հաշվի առնելով վերոգրյալ հանգամանքների համակցությունը, մասնավորապես՝ մեղադրյալի անձը և հանցանքի կատարումը նրան բնորոշ չլինելը, վերջինի հանցանքի վտանգավորության տեսանկյունից մոլորության մեջ գտնվելը՝ գտնում է, որ սույն դեպքում Գևորգ Սիմոնյանը հանցանքը կատարել է հանգամանքների պատահական զուգորդմամբ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ Գևորգ Սիմոնյանի կատարած գործողությունների վտանգավորության բնույթն ու աստիճանը, փաստացի պատճառված վնասի բացակայությունը, քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների ամբողջությունը, մասնավորապես՝ հանցանքը առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարելը, նախկինում արատավորված չլինելը, մեղքն ընդունելը, վարույթն իրականացնող մարմնին աջակցելը և կատարվածի համար անկեղծորեն զղջալը, այդ թվում՝ արարքի հանրային վտանգավորության որոշակի առանձնահատկությունները և հատկապես մեղադրյալի շարժառիթն ու նպատակը, թույլ են տալիս գալ այն եզրահանգման, որ տվյալ գործի շրջանակներում հիշյալ հանգամանքներն իրենց համակցության մեջ այն աստիճան առանձնահատուկ են, որ վերջինին մեղսագրվող հանցավոր արարքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի նվազագույն ժամկետը՝ 6 տարին, սույն իրավիճակում ակնհայտ խիստ է և չի բխում արդարության ու պատժի անհատականացման սկզբունքից:

Այսպիսով՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառմամբ ամբաստանյալ Գևորգ Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով պատիժ պետք է նշանակել ազատազրկում՝ 4 (...) տարի ժամկետով, որը նա պետք է կրի: (...)»[2]:

11. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն. *«(...) Մեղադրյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածը կիրառելիս և պատժի չափը որոշելիս*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 91-113:

Առաջին ատյանի դատարանը ղեկավարվել է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, բազմակողմանի գնահատման է ենթարկել մեղադրյալ Գ.Սիմոնյանի անձը բնութագրող փվյալները, նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ամբաստանյալի կողմից կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, որպիսի պայմաններում մեղադրյալ Գ.Սիմոնյանի նկատմամբ նրա կատարած արարքի համար կարող էր նշանակվել ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ, այսինքն՝ նրա նկատմամբ կիրառելի էր ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածը:

Այսպես, Վերաքննիչ դատարանը մեղադրյալ Գևորգ Սիմոնյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտում՝

- իրեղեն ապացույցների որոնմանն ու հայտնաբերմանն աջակցելը, մեղսագրվող հանցանքի կատարման մեջ իրեն լիովին մեղավոր ճանաչելը, զղջալն ու խոստովանական ցուցմունքներ տալը,

- բնակության վայրում դրականորեն բնութագրվելը և 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմին կամավոր կերպով մասնակցելը (համաձայն հարևանների կողմից տրված բնութագրի),

- հրամանատարության կողմից դրականորեն բնութագրվելը (...),

- հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ առաջին անգամ կատարելը (այս մեղմացնող հանգամանքի վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունն ընդունելի է Վերաքննիչ դատարանի համար), իսկ որպես անձը բնութագրող փվյալներ՝

- նախկինում դատապարտված և արատավորված չլինելը (...),

*- երիտասարդ լինելը (ծնվել է ***** թվականին),*

- ամուսնացած լինելը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ օբյեկտիվորեն գոյություն ունեցող, վերը թվարկված փվյալների և հանգամանքների համակցությունը վկայում է, որ նույնիսկ

ըստ բնույթի և վրանգավորության աստիճանի առանձնապես ծանր հանցագործություն կատարելու պայմաններում մեղադրյալ Գևորգ Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառմամբ 4 (չորս) տարի ժամկետով ազատազրկում նշանակելու միջոցով հնարավոր էր և հնարավոր է հասնել ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակներին՝ սոցիալական արդարության վերականգնմանը, պատժի ենթարկվող Գ.Սիմոնյանի վերասոցիալականացմանը և հանցագործությունների կանխմանը: Տվյալ դեպքում մեղադրյալ Գ.Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի չափը բխում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ և 69-րդ հոդվածներով սահմանված՝ արդարության, պատասխանատվության անհատականացման և պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից:

Վերաքննիչ դատարանի վերոգրյալ եզրահանգումը պայմանավորված է մասնավորապես այն հանգամանքով, որ մեղադրյալ Գ.Սիմոնյանի անձը բնութագրող և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող վերը նշված հանգամանքներն իրենց համակցությամբ հանդիսանում են բացառիկ հանգամանքներ, նվազեցնում են Մեղադրյալի, ինչպես նաև նրա կատարած արարքի հանրության համար վրանգավորության աստիճանը, որի ուժով նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառելու օբյեկտիվ հիմք են հանդիսանում: (...)»[3]:

12. Վերաքննիչ դատարանի դատավոր Լ.Աբգարյանը տարբերվող հատուկ կարծիքով գտել է, որ մեղադրյալ Գևորգ Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ նշանակելու վերաբերյալ Առաջին ատյանի դատարանի դատական ակտում առկա եզրահանգումները՝ արդարության ու պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման տեսանկյունից չեն կարող գնահատվել որպես

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 41-60:

հիմնավորված և պատճառաբանված, հետևաբար Գ.Սիմոնյանի նկատմամբ օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ նշանակելու հիմքեր չկան:

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

13. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք մեղադրյալ Գևորգ Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

14. ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համապատասխանեն կատարված արարքին»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության, պատժի կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցների ենթարկելը կամ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը պետք է լինի արդարացի՝ ապահովելով ինչպես կիրառվող օրենադրության, այնպես էլ պետական հակազդեցության համապատասխությունը կատարված հանցանքին, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Պատժի նպատակներն են՝ վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:*

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործությամբ պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով,

հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիտավորության կամ անզգուշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերաադցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքներ են՝*

1) հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ առաջին անգամ կատարելը, (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք այն աստիճան են նվազեցրել անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, որ դատարանի համոզմամբ սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափը կամ ժամկետը խիստ է թվյալ անձի համար, ինչպես նաև խմբի կողմից կատարված հանցանքի մասնակցի կողմից այդ խմբի կատարած հանցագործությունը բացահայտելուն աջակցելու դեպքում դատարանը կարող է նշանակել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից կամ ժամկետից պակաս չափ կամ ժամկետ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով կամ հոդվածի մասով: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը»:*

ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի (Գ.Սիմոնյանին մեղսագրվող արարքի կատարման պահին գործող խմբագրությամբ) համաձայն՝ *«1. Իրացնելու նպատակով թմրամիջոց (...) ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը կամ մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց (...) ապօրինի ձեռք բերելը՝ (...)*

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

(…)

2) շահադիտական դրդումներով,

(…)

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

(…)

2) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով։ (…)»։

15. Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ պատժի արդարությունը դրսևորվում է հանցագործության և քրեաիրավական ներգործության միջոցների (պատժի) համաչափության ապահովմամբ: Հետևաբար, կոնկրետ գործով պատիժ նշանակելիս, դատարանի ներքին համոզմունքը ձևավորվում է կատարված արարքի հանրային վտանգավորության բնույթի ու աստիճանի, հանցավորի անձի, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների վերլուծության հիման վրա՝ ելնելով պատժի նպատակների իրացումն ապահովելու անհրաժեշտությունից[4]:

16. *Պարույր Բայրամյանի* գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն համապատասխան հոդվածում: Այնուհանդերձ, դատարանի այդ հայեցողական լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների, մասնավորապես.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը,

---

[4] Տե՛ս, *mutatis mutandis,* Վճռաբեկ դատարանի՝ *Գարուշ Մադաթյանի* գործով 2009 թվականի փետրվարի 17-ի թիվ ԵՇԴ/0029/01/08, *Նարեկ Սարգսյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11, *Արմեն Շահբազյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13, *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13, *Գառնիկ Գալստյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14, և *Էդվարդ Ադամյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0048/01/14 որոշումները:

գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները[5]:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատիժ նշանակելիս հաշվի առնվող մեղմացնող հանգամանքների չափանիշների վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները վերաբերելի մասով *(mutatis mutandis)* կիրառելի են նաև գործող քրեաիրավական կարգավորումների նկատմամբ:

17. Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հարցին Վճռաբեկ դատարանը 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածի կարգավորումների շրջանակներում անդրադարձել է մի շարք նախադեպային որոշումներում, կայուն նախադեպային իրավունք ձևավորելով այն մասին, որ քննարկվող նորմը կարող է կիրառվել հետևյալ երկու պայմաններից առնվազն մեկի առկայության պարագայում՝ գործի բացառիկ հանգամանքների և խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքի բացահայտմանն ակտիվորեն աջակցելու դեպքում: Օրենքում օգտագործվող «բացառիկ» բառը ենթադրում է, որ նշված հոդվածի կիրառման համար հիմք հանդիսացող մեղմացնող հանգամանքը կամ մեղմացնող հանգամանքների համակցությունը դուրս են սովորականի շրջանակներից և այն աստիճան առանձնահատուկ են, որ վերածվում են բացառության: Մասնավորապես, դրանք կարող են կապված լինել հանցագործության շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի, ինչպես նաև այլ հանգամանքների հետ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Ընդ որում, կարևորը ոչ թե պատիժը մեղմացնող տվյալների քանակն է, այլ այն, թե ինչքանով են դրանք

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Պարույր Բայրամյանի* գործով 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշումը:

էականորեն ազդել արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանի նվազեցման վրա[6]:

Վճռաբեկ դատարանը *Հարություն Հաբեշյանի* գործով իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ բացառիկ հանգամանքները կապված են հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ: Այդպիսիք կարող են լինել նաև այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը[7]:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները ևս վերաբերելի մասով *(mutatis mutandis)* կիրառելի են նաև գործող քրեաիրավական կարգավորումների նկատմամբ:

18. Անդրադառնալով հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ առաջին անգամ կատարելուն, Վճռաբեկ դատարանը *Կարեն Հայրապետյանի* գործով արձանագրելով, որ հանգամանքների պատահական զուգորդումը նախ և առաջ փաստի խնդիր է, որը դատարանի կողմից պետք է հաստատվի գործով բացահայտված փաստական հանգամանքների համակցությամբ, իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող այդ հանգամանքի առկայության փաստը հաստատելու համար անհրաժեշտ պայմաններն են՝

ա) անձը պետք է հանցանքը կատարած լինի առաջին անգամ,

բ) հանցանքի կատարումը պետք է պայմանավորված լինի հանցավորի կամքից անկախ գոյություն ունեցող հանգամանքների այնպիսի փոփոխությամբ կամ

---

[6] Տե՛ս, *mutatis mutandis,* Վճռաբեկ դատարանի՝ *Ռոբերտ Խաչոյանի* գործով 2007 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-55/07, *Սամվել Հունիկյանի* գործով 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-11/08, *Հակոբ Հովհաննիսյանի* գործով 2008 թվականի փետրվարի 29-ի թիվ ՎԲ-13/08, *Վաչիկ Մնացականյանի* գործով 2008 թվականի մայիսի 23-ի թիվ ՎԲ-25/08, *Նիկոլայ Հովսեփյանի* գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ՏԴ/0094/01/09, *Վարդան Գասպարյանի* գործով 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԱՎԴ2/0057/01/09, *Գոռ Ավետիսյանի և Արմեն Հովակիմյանի* գործով 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԱՔԴ/0164/01/09 և *Հրանտ Խաչատրյանի ու Վաղարշակ Մինասյանի* գործով 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԱՔԴ/0195/01/09 որոշումները:

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հարություն Հաբեշյանի* գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-145/07 որոշումը:

համընկմամբ, որոնք ուղղակի կամ անուղղակի իրենց հուզական ազդեցությունն ունենան անձի նկատմամբ և նպաստեն հանցանքի կատարմանը[8]:

18.1. Ձարգացնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանն *Անդրանիկ Ավետիսյանի* գործով որոշմամբ արձանագրել է, որ ի թիվս այլոց, որպես հանգամանքների պատահական զուգորդում կարող են գնահատվել.

1. իր կողմից կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատման կապակցությամբ անձի մոլորությունը,

2. հանցավոր արարքներ կատարող անձանց խմբում մեկ անգամ պատահական գտնվելն ու այդ խմբի կողմից կատարված հանցագործությանը մեկ անգամ մասնակցելը,

3. մեղսագրվող հանցանքի կատարումն անձին ակնհայտորեն բնորոշ չլինելը,

4. հանցանքի կատարումը հոգեճնշող վիճակում, արտակարգ կամ այլ հանգամանքների ազդեցության տակ[9]:

19. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- մեղադրյալ Գևորգ Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է հանրային քրեական հետապնդում և նրան մեղադրանք է ներկայացվել[10],

- Առաջին ատյանի դատարանը Գևորգ Սիմոնյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառմամբ նրա նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում՝ 4 (չորս) տարի ժամկետով:

Գ.Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածը կիրառելի լինելու առնչությամբ դատարանը նշել է, որ հնարավոր չէ հանրային վտանգավորության միևնույն շեմին դասել թմրամիջոցներն իրացնողի և թմրամիջոցները տեղադրելով գումար վաստակողի գործողությունները: Դատարանը կարևորել է նաև անձի վերաբերմունքը փաթեթների պարունակության և դրա

---

[8] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Կարեն Հայրապետյանի* գործով 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ԵԿԴ/0146/01/08 որոշման 15-րդ կետը:

[9] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Անդրանիկ Ավետիսյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԱՆԴ/0091/01/09 որոշման 22-րդ կետը:

[10] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետերը:

քանակի նկատմամբ՝ նշելով, որ թեև Գ.Սիմոնյանը իմացել է, որ պետք է իրացնի «Կրիստալ» և «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցներ, սակայն այդ փաթեթները ստանալուց նա հնարավորություն չի ունեցել հասկանալու, թե որն ինչ թմրամիջոց է պարունակում: Ավելին՝ Գ.Սիմոնյանն այդ փաստի նկատմամբ անտարբերություն է դրսևորել, քանի որ անկախ փաթեթի պարունակությունից՝ տեղադրման համար վճարը նույնն է եղել: Դատարանը նշել է նաև, որ Գ.Սիմոնյանի համար միևնույն է եղել, թե այդ փաթեթները քանի գրամ են կշռել, դրանց պարունակությունը համապատասխանել է որակին, թե ոչ: Դատարանը գտել է, որ արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնող այս բնույթի հանգամանքները՝ քննարկվող հանցակազմի շրջանակում կարող են ինչ-որ տեղ բացառիկ դիտարկվել: Դրան զուգահեռ, Առաջին ատյանի դատարանը որպես անձի վտանգավորությունն էականորեն նվազեցնող է համարել հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ առաջին անգամ կատարելը: Ըստ Գ.Սիմոնյանի ցուցմունքի՝ ինքը «տեղադրողի աշխատանքի» մասին իմացել է գովազդի միջոցով, որը եղել է տելեգրամյան «**********» էջում: Առաջին ատյանի դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ հանցավոր գործունեություն իրականացնելու վերաբերյալ առկա են հայտարարություններ, որոնք հրապարակային և հասանելի են ցանկացած անձի, դա կարող է որոշակի մոլորության մեջ գցել անձին, քանի որ շատ հաճախ նմանատիպ սխեմաների մեջ ներքաշված անձինք խորությամբ չեն կարող պատկերացնել իրենց քայլերի վտանգավորությունը, դրանց բարձր հակահրավականությունը, հանրության համար սպասվող հետևանքների ծանրությունը և այլն: Առաջին ատյանի դատարանը նաև նշել է, որ սույն մեղմացնող հանգամանքի շրջանակներում հաշվի է առնում նաև մեղադրյալին այդ արարքն առերևույթ բնորոշ չլինելը: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանը գտել է, որ Գ.Սիմոնյանը հանցանքը կատարել է հանգամանքների պատահական զուգորդմամբ:

Ըստ Առաջին ատյանի դատարանի՝ Գ.Սիմոնյանի կատարած գործողությունների վտանգավորության բնույթն ու աստիճանը, փաստացի պատճառված վնասի բացակայությունը, քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների ամբողջությունը, մասնավորապես՝ հանցանքն առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ

կատարելը, նախկինում արատավորված չլինելը, մեղքն ընդունելը, վարույթն իրականացնող մարմնին աջակցելը և կատարվածի համար անկեղծորեն զղջալը, իրենց համակցության մեջ այն աստիճան առանձնահատուկ են, որ Գ.Սիմոնյանին մեղսագրվող արարքի համար օրենքով նախատեսված ազատազրկման ձևով պատժի նվազագույն ժամկետը սույն իրավիճակում ակնհայտ խիստ է, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառմամբ Գ.Սիմոնյանի նկատմամբ պետք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիայով նախատեսված պատժից ավելի մեղմ պատիժ[11],

- Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ըստ էության համաձայնել է ստորադաս դատարանի հետևությունների հետ, որպես մեղադրյալ Գևորգ Սիմոնյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ դիտարկելով նաև ծառայության և բնակության վայրերում դրականորեն բնութագրվելը և հարևանների կողմից տրված բնութագրի համաձայն՝ 44-օրյա պատերազմին կամավոր կերպով մասնակցելը[12]:

20. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-18.1-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ Գ.Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառման հիմքում դրված հիմնավորումները չեն բխում տվյալ հոդվածի պահանջներից և օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներից, ստորադաս դատարանների կողմից որպես բացառիկ ճանաչված հանգամանքները ոչ միայն բացառիկ չեն, այլև դրանցից որոշները չեն բավարարում անգամ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով սահմանված՝ մեղմացնող հանգամանքներին ներկայացվող չափանիշներին:

21. Նախ անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն դատողությունը, որ հանրային վտանգավորության տեսանկյունից չեն կարող հավասարեցվել կամ նույնանալ թմրամիջոցներ իրացնողի գործողությունները և այն անձի

[11] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:
[12] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

գործողությունները, որն այդ թմրամիջոցները որոշակի գումարի դիմաց տեղադրում է ինչ-որ վայրում, և ում համար թմրամիջոցի իրացումն առաջնային կամ հիմնական նպատակը չէ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածով նախատեսված արարքի քրեաիրավական որակման տեսանկյունից որևէ նշանակություն չունի, թե թմրամիջոցի ապօրինի իրացումն ինչ եղանակով է կատարվել: Հանցավոր տվյալ արարքի նկարագրությունից ակնհայտ է, որ թմրամիջոցի ապօրինի իրացման պարագայում օրենսդիրը որևէ տարբերակում չի դրել իրացման եղանակի առումով և թմրամիջոցի ապօրինի իրացման ցանկացած եղանակ քրեորեն հետապնդելի և պատժելի է: Վճռաբեկ դատարանն այս առումով հիմնավոր է համարում տարբերվող հատուկ կարծիքում առկա այն դատողությունը, որ թմրամիջոցների իրացման դիմաց շահույթի ստացումը քրեաբանական տեսանկյունից ոչ թե անձի նպատակն է, այլ դրդումը, ուստի՝ իրացման նպատակը և շահադիտական դրդումը որևէ կերպ չեն կարող «մրցակցել» որպես առաջնային կամ երկրորդային նպատակներ:

22. Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում նաև Առաջին ատյանի դատարանի այն դատողությունը, որ թմրամիջոցների իրացման փաստի նկատմամբ Գ.Սիմոնյանը դրսևորել է անտարբերություն, քանի որ վերջինս չի ճանաչել այն անձանց, ովքեր պետք է վերցնեին թմրամիջոցներով փաթեթները, ինչպես նաև տեղեկություն չի ունեցել փաթեթների պարունակության և թմրամիջոցի քանակի վերաբերյալ: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նկատել, որ մեղադրյալի գործողություններն **ամենևին չեն կարող գնահատվել որպես թմրամիջոցների իրացման փաստի նկատմամբ անտարբերություն**: Ընդհակառակը՝ նա հստակ գիտակցել է, որ թմրամիջոցների իրացմանն ու տարածմանն ուղղված գործողություններ է կատարում: Ինչ վերաբերում է նրան, որ վերջինը չի ճանաչել այն անձանց, ովքեր պետք է վերցնեին թմրամիջոցներով փաթեթները, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված հանգամանքը ոչ թե նվազեցրել, այլ բարձրացրել է նրա արարքի հանրային վտանգավորության աստիճանը, քանի որ տեղադրված փաթեթները ձեռքբերողի թվում կարող են լինել անչափահասներ, առողջական խնդիրներ, հոգեկան շեղումներ կամ խոցելի վիճակում գտնվող անձինք, ինչպես նաև հանցավոր վարքագիծ դրսևորելուն

հակված, թմրամիջոցներից կախվածություն ունեցող և ընդհանուր առմամբ հասարակության համար առավել վտանգ ներկայացնող անձինք: Նույնը վերաբերում է նաև ստորադաս դատարանի այն դիտարկմանը, որ մեղադրյալի համար միևնույն է եղել փաթեթների պարունակությունը՝ թմրամիջոցների տեսակի և քանակի առումով: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը նույնպես համոզիչ է համարում հատուկ կարծիքում արտահայտված տեսակետն առ այն, որ փաստորեն, անկախ նրանից, թե փաթեթների մեջ եղել է բուսական ծագման, թե առողջության համար առավել բացասական հետևանքներ առաջացնող սինթետիկ ծագման թմրամիջոց, մեղադրյալը դրանք ամբողջությամբ տարածելու էր: Հատուկ կարծիքում իրավամբ արձանագրվել է, որ Առաջին ատյանի դատարանի նման մեկնաբանությունը չի վկայում ոչ միայն հանգամանքների բացառիկության, այլև արարքի հանրային վտանգավորության նվազ լինելու մասին:

23. Ինչ վերաբերում է հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարելուն, ապա քննարկվող մեղմացնող հանգամանքի առկայության վերաբերյալ ստորադաս դատարանների պնդումները նույնպես հիմնավոր չեն և հակասում են Վճռաբեկ դատարանի՝ վերը մեջբերված որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին: Մասնավորապես, քրեական վարույթում բացակայում են տվյալներ այն մասին, որ հանցանքի կատարումը սույն դեպքում պայմանավորված է եղել հանցավորի կամքից անկախ գոյություն ունեցող հանգամանքների այնպիսի փոփոխությամբ կամ համընկմամբ, որոնք ուղղակի կամ անուղղակի իրենց հուզական ազդեցությունն են ունեցել Գ.Սիմոնյանի նկատմամբ և նպաստել են հանցանքի կատարմանը: Բացի այդ, հիմնավոր չէ և գործի նյութերից չի բխում նաև ստորադաս դատարանների եզրահանգումն այն մասին, որ Գ.Սիմոնյանն իրեն մեղսագրվող արարքի հանրային վտանգավորության կապակցությամբ գտնվել է մոլորության մեջ: Արարքի հանրային վտանգավորության կապակցությամբ մոլորությունը, ի թիվս այլնի, պետք է հանդիսանա անձի հանցավոր և հետհանցավոր գործողությունների գնահատման արդյունք: Այս առնչությամբ հարկ է նկատել, որ Գ.Սիմոնյանը, գիտակցելով իր արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը՝ փորձել է փախուստի դիմել ոստիկանության աշխատակիցներից, ավտոմեքենայից նետել է թմրամիջոցների պարունակությամբ փաթեթները՝

փորձելով ձերբազատվել հանցագործության հետքերից և առարկաներից, նետել է նաև այն բջջային հեռախոսը, որով կապի մեջ է գտնվել իրեն թմրամիջոցների փաթեթները տրամադրած, քննությամբ չպարզված տելեգրամյան օգտատիրոջ հետ: Նշված փաստերն ուղղակիորեն վկայում են այն մասին, որ Գ.Սիմոնյանն իր արարքի հանրային վտանգավորության աստիճանի գնահատման կապակցությամբ չի գտնվել որևէ տեսակի մոլորության մեջ:

Անդրադառնալով Առաջին ատյանի դատարանի այն փաստարկմանը, որ *«ողջամիտ է այն տրամաբանությունը, որ վկայակոչված հանցանքի կատարումը մեղադրյալին առերևույթ բնորոշ չէ»*, քանի որ վերջինը նախկինում դատապարտված չի եղել, առաջին անգամ է հանցանք կատարում, զինվորական ծառայության և առօրյա կյանքում դրականորեն է բնութագրվում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թվարկված հանգամանքներն իրենց մեջ չեն պարունակում որևէ այնպիսի առանձնահատկություն, որը կվկայեր մեղսագրվող հանցանքի կատարումը Գ.Սիմոնյանին **ակնհայտ բնորոշ չլինելու** [13] և արդյունքում հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ կատարելու մասին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկվող մեղմացնող հանգամանքի առկայությունը հաստատված համարելու օբյեկտիվ հիմքը բացակայում է:

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ հանգամանքը կարող է համարվել մեղմացնող և հաշվի առնվել պատիժ նշանակելիս, եթե ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը, հակառակ պարագայում այն չի կարող համարվել որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք, և որպես այդպիսին հաշվի առնվել դատարանի կողմից անձի նկատմամբ պատիժ նշանակելիս: Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում նաև բողոքաբերի այն փաստարկը, որ ստորադաս դատարանները չեն պատճառաբանել, թե մեղադրյալ Գ.Սիմոնյանի կողմից իրեն մեղավոր ճանաչելը, անկեղծորեն զղջալը և խոստովանական ցուցմունքներ տալը, ինչպես են **էականորեն նվազեցնում** կատարված հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը:

---

[13] Տե՛ս սույն որոշման 18-18.1-ին կետերը:

24. Վճռաբեկ դատարանի համար ընդունելի չէ նաև սոցիալական ցանցերի օգտատերերի անհատական էջերում առկա հայտարարությունները որպես *«հրապարակային գովազդ»* որակելը: Բացի այդ, ի հակազդեցություն այդպիսի հայտարարությունների, իրավասու պետական մարմինների կողմից տարբեր հարթակներով, հրապարակորեն՝ հեռուստատեսությամբ, լրատվական միջոցներով, սոցիալական ցանցերով և այլն, պարբերաբար իրազեկվում և նախազգուշացումներ են արվում թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար սահմանված քրեական պատասխանատվության մասին [14] , հետևաբար դրան հանրային վտանգավորության կապակցությամբ անձանց մոլորության մեջ գտնվելու մասին ստորադաս դատարանների պատճառաբանություններն իրատեսական չեն, որպիսի հետևություն առկա է նաև հատուկ կարծիքում:

25. Վերոշարադրյալի արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանցանքի շարժառիթների ու նպատակի, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի հետ կապված բացառիկ հանգամանքներ սույն վարույթով առկա չեն, մեղադրյալ Գ.Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառման հիմքում դրված հանգամանքներն այն աստիճան առանձնահատուկ չեն, որ վերածվեն բացառության և էականորեն նվազեցնեն կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը՝ հիմք հանդիսանալով մեղադրյալի նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար:

26. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Գևորգ Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառմամբ՝ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

27. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը, Գևորգ Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ

[14] Տե՛ս, օրինակ ՀՀ ներքին գործերի նախարարության կայքէջը՝ https://mia.gov.am/articles/news/mia-2026-06-26-140057, https://mia.gov.am/articles/news/mia-2025-04-04-170616 հղումներով:

նշանակելով, իսկ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելով, թույլ են տվել նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում, այն է՝ կիրառել են ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածը, որը ենթակա չէր կիրառման, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 387-րդ հոդվածի՝ ստորադաս դատարանների դատական ակտերը փոփոխելու հիմք է:

Հետևաբար, Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 16-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 13-ի որոշումը պետք է փոփոխել, և Գևորգ Սիմոնյանի նկատմամբ պետք է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված նվազագույն պատիժ՝ ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով, պատժի կրման սկիզբը հաշվելով 2023 թվականի փետրվարի 21-ից:

Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գևորգ Միերի Սիմոնյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 16-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 13-ի որոշումը փոփոխել:

2. Գևորգ Միերի Սիմոնյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի կիրառումը վերացնել և նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով պատիժ նշանակել ազատազրկում՝ 6 (վեց) տարի ժամկետով: Պատժի կրման սկիզբը հաշվել 2023 թվականի փետրվարի 21-ից:

3. Ստորադաս դատարանների դատական ակտերը մնացած մասով թողնել անփոփոխ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ